

ՀԱՐՑԵՐ ԵՎ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Նատրիումի բիկարբոնատի 8,4% լուծույթի յուրաքանչյուր 1 միլիլիտրը պարունակում է 1 մեկվ դեղամիջոց : Բժիշկը հանձնարարել է ներարկել 40 մեկվ NaHCO_3 : Բաժանմունքում առկա է պրեպարատի 5% լուծույթը : Վերջինից քանի՞ միլիլիտր է անհրաժեշտ ներմուծել, որպեսզի պացիենտը ստանա նշանակված դեղաչափը:

2. Միևչև մեկ տարեկան հիվանդներին ն/ե ինֆուզիաները ցանկալի է իրականացնել միկրոկաթոցիկային համակարգերով, որոնց հոսքային ծավալը մոտավորապես 60 կաթիլ/մլ է : 5,5 կիլոգրամ մարմնի զանգվածով պացիենտին նշանակվող հեղուկի ծավալը կազմում է ժամական 22 միլիլիտր : Միկրոկաթոցիկի կաթիլների ինչպիսի՞ արագությունը (կաթիլ/րոպե և կաթիլ/ժամ) կապահովի նշանակված դեղաչափով հեղուկի ինֆուզիան:

3. Ընդունված է որպես ջերմիջեցնող միջոցառում կիրառել ԱՆԱԼԳԻՆԻ և ԴԻՄԵԴՐՈԼԻ միասնական ներմուծումը (միջմկանային կամ ներերակային ուղիով) : Նշանակված է՝ ԱՆԱԼԳԻՆ 50% 3մլ և ԴԻՄԵԴՐՈԼ 1% 1մլ : Գումարային քանի՞ միկրոգրամ «չոր կյուբ» է ներմուծվում հիվանդին :

4. Կալիումի քլորիդի դեղահաբի յուրաքանչյուր 600 միլիգրամը համարժեք է 8 միլիեկվիվալենտ ազդող կյուբին: Առկա են պրեպարատի 1 գրամանոց հաբերը : Պացիենտին նշանակվել է 20 մեկվ կալիումի քլորիդ : 1 գրամանոց հաբերից որքա՞ն է անհրաժեշտ տալ՝ նշված դեղաչափին ապահովելու համար:

5. Ներշնչվող օդում ածխաթթու գազի պարունակությունը 0,04% է, իսկ թթվածնինը՝ 21% : Արտաշնչվող օդում O_2 -ի պարունակությունը 16% է : Ձեր կարծիքով մոտավորապես որքա՞ն է CO_2 -ի պարունակությունն այնտեղ :

6. Ցենտրիֆուգի մեջ դրված է 13,5% ճարպ պարունակող 1 լիտր կաթ : 5 րոպե 3500 պտույտ/րոպե արագությամբ պտտելուց հետո ողջ ճարպը առանձնանում է հեղուկից և վեր բարձրանում, այն վերցվում և կշռվում է : Մոտավորապես որքա՞ն կկշռի ստացված կարագը:

7. «Աֆթաբ» յուղ օգտագործող փորձառու տատիկը թթու դրած վարունգ պատրաստելու նպատակով 10 լիտր ջրին 75 գրամ կերակրի աղ է խառնում : Համտեսելուց հետո ևս 500 մլ ջուր է ավելացնում և կրկին փորձում ու բավարարվում աղիությունից : Քանի՞ տոկոսանոց աղային լուծույթ է ստացվում :

8. Դպրոցում առկա երեք տասներորդ դասարաններից առաջինում կա 12 տղա և 18 աղջիկ աշակերտ, երկրորդում՝ 17 տղա և 11 աղջիկ, իսկ երրորդում՝ 15 տղա և 15 աղջիկ : Ինչպիսի՞ն է տասներորդիների տոկոսային հարաբերությունն ըստ սեռի :

9. Հայրը կշռում է 80 կիլոգրամ, մայրը՝ 60 : Մեծ երեխայի կշիռը մոր կշռի 60 տոկոսն է կազմում, միջնակինը՝ հոր կշռի 30 տոկոսը, իսկ փոքրիկինը՝ մեծ երեխայի 50 տոկոսը : Որքա՞ն է այդ ընտանիքի անդամների գումարային զանգվածը:

10. Բետադինի 10% լուծույթն ինչպես նոսրացնել, այսինքն՝ վերջինից քանի՞ միլիլիտր վերցնել և որքա՞ն լուծիչ ավելացնել, որպեսզի ստացվի վերջային խոռոչների ողողման համար կիրառելի 500մլ 0,025% լուծույթ :

67,2 միլիլիտր

22 կաթ/ր և 1320 կաթ/ժամ

1510 միլիգրամ

1,5 հաբ

4- 4,5 %

135 գրամ

0,71 %

50/50

218 կիլոգրամ

1,25մլ + 498,75մլ